Տեղեկանք

Ղասաբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործի վերաբերյալ

ՀՀ կառավարության որոշմամբ 2005թ-ին պետության կարիքների համար վերցվել է Բուզանդի 25 հասցեում գտնվող **57ք.մ.** մակերեսով բնակարանը: Սեփականատերեր Լ.Ղասաբյանին, Գ. Ղասաբյանին, Ա. Ղասաբյանին և Լ. Գրիգորյանին որպես փոխհատուցում առաջարկվել է **23,640** ԱՄՆ դոլար (գույքի գնահատված արժեքը) և ևս **14,827** ԱՄՆ դոլար, որպես խրախուսում, եթե նրանք պայմանագիրը ստորագրվի 5 օրվա ընթացքում (ընդհանուր առմամբ **38,467** ԱՄՆ դոլար):

Սեփականատերերը առաջարկը մերժում են և կառուցապատողի բողոքի հիման վրա 03.03.2005 Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը բավարարում է կառուցապատողի հայցը և պարտավորեցնում է դիմումատուներին կնքել պայմանագիր՝ **23,640** ԱՄՆ դոլար գումարով:

28.06.2005 դիմումատուները հայց են ներկայացնում ՄԻԵԴ ընդդեմ Հայաստանի Հանրապետության պնդելով, որ խախտվել են Կոնվենցիայի 8-րդ հոդվածով և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված իրենց իրավունքները:

21.11.2007 գործն ուղարկվում է ՀՀ կառավարությանը:

24.09.2008 կառավարությունը դիմումատուներին առաջարկում է հաշտության համաձայնագիր կնքել և ՄԻԵԴ-ից նրանց հայցը ետ վերցնելու և նրանց արդեն իսկ վճարած **23,640** ԱՄՆ դոլար գումարը վերադարձնելու պայմանով նրանց տրամադրել իրենցից վերցված (57ք.մ.) բնակարանից 30 մետր հեռավորության վրա (Բուզանդ-Կողբացի խաչմերուկում) կառուցվող շենքից 140 ք.մ. մակերեսով բնակարան և 2005թ. օգոստոսից մինչև տվյալ շենքի շահագործման հանձնելը ամսական 120,000 ՀՀ դրամ՝ որպես այլ բնակարան վարձակալելու համար վարձավճար (ընդհանուր 7,200,000 ՀՀ դրամ), կամ վճարել **22,260,000** ՀՀ դրամ և վարձավճարի գումարը:

Այս առաջարկը ևս մերժվում է և պահանջվում **130,200,000** ՀՀ դրամ (մոտ **252,000** եվրո), գումարած **70,000** եվրո՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում: Ընդհանուր առմամբ՝ մոտ **320,000** եվրո:

ՄԻԵԴ-ը կառավարությունից պահանջում է հստակեցնել որպես փոխհատուցում առաջարկվող բնակարանի տվյալները: Հարցմանն ի պատասխան կառավարությունը տեղեկացնում է, որ որպես փոխհատուցում դիմումատուներին առաջարկվող կոնկրետ բնակարանը **117.7 ք.մ.** է, և դրա կոնկրետ հասցեն է՝ **Ամիրյան 4/6 շենք, բնակարան 40,** և ՄԻԵԴ է ուղարկում բնակարանի սեփականության վկայականը:

Հաշտության համաձայնության հասնելու անհաջող փորձերից հետո կառավարությունը 10.09.2010 հանդես է գալիս Միակողմանի հայտարարությամբ՝ ընդունելով, որ խախտվել են դիմումատուների Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանված իրավունքները և պահանջելով ՄԻԵԴ-ից դադարեցնել գործի քննությունը և առաջարկում է դիմումատուներին տրամադրել նշված բնակարանը՝ որպես փոխհատուցում նրանց կրած ամբողջ վնասի համար:

27.10.2010 ՄԻԵԴ ուղարկված նամակով դիմումատուները մերժում են կառավարության միակողմանի հայտարարությունը նշելով, որ նշված բնակարանը չի հանդիսանում արդարացի փոխհատուցում իրենց կրած վնասի համար և պահանջում են 117,700,000 ՀՀ դրամ (մոտ 230,000 եվրո)՝ որպես նյութական վնասի փոխհատուցում և 140,000 եվրո՝ որպես բարոյական վնասի մասնակի փոխհատուցում, ինչպես նաև ՄԻԵԴ-ից պահանջում են փաստաբանական ծախսերի փոխհատուցում:

15.11.2011 ՄԻԵԴ-ը, հիմք ընդունելով կառավարության միակողմանի հայտարարությունը, կայացնում է որոշում, որով դադարեցնում է գործի քննությունը և պարտավորեցնում է կառավարությանը դիմումատուներին տրամադրել նշված բնակարանը:

Կառավարությունը հայտնում է իր պատրաստակամությունը՝ տրամադրել դիմումատուներին նշված բնակարանը, և պահանջում է վերադարձնել արդեն իսկ վճարված 23,640 ԱՄՆ դոլար գումարը:

Դիմումատուները հրաժարվում են վերադարձնել **23,640** ԱՄՆ դոլար գումարը պատճառաբանելով, որ ՄԻԵԴ որոշման մեջ դրա վերադարձի վերաբերյալ նշում չկա և պահանջում են իրենց տրամադրել բնակարանը՝ առանց նշված գումարը վերադարձնելու:

26.03.2012 դիմումատուների ներկայացուցիչ փաստաբան Ա.Գրիգորյանը նամակ է ուղարկում ՄԻԵԴ պահանջելով վերսկսել գործի քննությունը, քանի որ, ըստ նրա, կառավարությունը հրաժարվում է իրենց տրամադրել նշված բնակարանը՝ առանց իրենց կողմից **23,640** ԱՄՆ դոլար գումարը վերադարձնելու:

10.07.2012 ՄԻԵԴ-ը որոշում է կայացնում վերսկսել գործի քննությունը: Դիմումատուներն իրենց փոխհատուցման պահանջում ՀՀ կառավարությունից պահանջում են **117,700,000** ՀՀ դրամ (մոտ **230,000** եվրո)՝ որպես նյութական վնասի փոխհատուցում և 140,000 եվրո՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում (ընդհանուր առմամբ մոտ 370,000 եվրո), նաև ՄԻԵԴ-ից պահանջում են փաստաբանական ծախսերի փոխհատուցում:

ՀՀ կառավարությունը ներկայացնում է իր առարկությունները և 13.11.2014 ՄԻԵԴ-ը վճիռ է կայացնում նշված գործով: Համաձայնելով կառավարության այն դիտարկման հետ, որ փոխհատուցումը պետք է հաշվարկել դիմումատուների իրականում կրած վնասը հաշվի առնելով, վճռում է, որ ՀՀ կառավարությունը դիմումատուներին պետք է վճարի **40,000 եվրո՝** որպես նյութական վնասի փոխհատուցում և **24,000** եվրո՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում, ընդհանուր առմամբ՝ **64,000** եվրո գումար:

Ամփոփում- ՀՀ կառավարությունը դիմումատուներին առաջարկում է իրենցից վերցված 57ք/մ մակերեսով բնակարանի դիմաց տրամադրել 117.7 ք.մ. մակերեսով բնակարան՝ պահանջելով վերադարձնել արդեն իսկ վճարված 23,640 ԱՄՆ դոլար գումարը: Դիմումատուները հրաժարվում են վերադարձնել 23,640 ԱՄՆ դոլար գումարը՝ կառավարությունից պահանջելով մոտ 370.000 եվրո գումար:
Եվրադատարանը դիմումատուների հայցը բավարարում է՝ փոխհատուցման համարժեք գումար համարելով 64.000 եվրոն: